ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

03.06.2022 23:14

ՀՀ փաստաբանների պալատը, որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող կառույց, կարևորելով ժողովրդավարական հասարակությունում հավաքների ազատությունը, մշտապես հետևում է հավաքների մասնակիցների նկատմամբ հասարակական կարգի պահպանմանն ուղղված ուժային կառույցների կողմից դրսևորած վարքագծին:

Վերջին օրերին և հատկապես այսօր հավաքների մասնակիցների ու ոստիկանների միջև արձանագրված բախումներն անհանգստացնող են:

Խաղաղ հավաքների մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառելը, բերման ենթարկելը և առանց սահմանված կարգով նախատեսված հիմքերի հատուկ միջոցներ կիրառելն անթույլատրելի է, նմանապես անթույլատրելի են նաև սադրանքները:

Պետությունը, կրելով հասարակական կարգի պահպանման պարտականությունը, առանց օրենքով նախատեսված հիմքերի չի կարող սահմանափակել հավաքների մասնակիցների իրավունքները:

Հետևապես, հորդորում ենք ցուցաբերել զսպվածություն և գործել օրենքի ու օրինականության շրջանակներում:

Միաժամանակ, հիշեցնում ենք, որ Փաստաբանների պալատը շարունակում է անվճար առաջին իրավաբանական օգնություն տրամադրել հավաքների բերման ենթարկված մասնակիցներին: Վերջիններս իրենց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջնային անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար, կարող են կապ հաստատել խմբի փաստաբանների հետ հետևյալ հեռախոսահամարով՝ 033-600-714:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
Սիմոն Բաբայան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })